Գեկտեմբերի 21-ին

Գեկտեմբերի 18-ին, հասարակաց ժողովարա-
նում, կայացաւ յայտնի Ռէգեր բոլորի նուագա-
հանդէսը: Նրանցից մէկը նուագում է դաշնամու-
րի վրա, միւսը—ջութակի, իսկ երրորդը—վիո-
լոնչի: Նուագահանդէսի ծրագիրը կազմված էր
շատ հետաքրքիր՝ գլխաւորապէս Մենդելսոնից և
Չայկովսկիից, trio անելու համար: Շատ գեղե-
ցիկ էր Պոպուլերի «Polonais de concert»-ը, որը
կատարեց Խմբիկ Ռէգեր վիոլոնչիկ վրա—solo:
Ոչ պակաս հմտութեամբ նուագեց, նոյնպէս solo,
ջութակի վրա Սֆի Ռէգեր՝ Վենիսիական «Sou-
venir de Moscou»: Այսպիսի նուագահանդէսը
մեծ տպւտւորություն է թողնում մեզ, բաժնու-
ցիներին վրա, որովհետեւ տարեկան 2—3 ան-
գամ հազիւ ենք բազմ ունենում այսպէս բաւա-
կանութիւն ստանալ, մեր մօնօտուն կենքում:

Բաժնուրդի պէս տեղում, ուր մարդ, համարեա,
ամբողջ օրը աշխատում է, երեկոյեան մի քանի
ազատ ժամերը չը գիտէ ինչպէս անցկացնել: Ոչ
թաւորն կայ (եթէ չը հաշուենք բալետային) նը-
ման տեղը, ուր տարեկան 4—5 անգամ սիրողնե-
րի ներկայացումն է լինում, և որը այժմ կրկէս
են դարձրել, ոչ էլ մինչև անգամ մի հասարակ
գրադարան, ուր մարդ կարողանայ մի քիչ ազատ
չունչ քաշել: Եւ հէնց այդ պատճառով էլ՝ ամ-
բողջ կենսքը կենտրոնացնում է բնատրամա-
րում և թղթախաղի սեղաններէ չուրջը:

Ինչպէս տեղեկացանք հաստատ աղբիւրից, հա-
յոց Բարեգործական ընկերությունը իրաւունք է
ստացել կառավարությունից այստեղ գրադարան
բացանելու և ընկերությունն հիւղը դրա համար
արդէն մի որոշ գումար ունի: Այժմ հարցի վը-
ճիւղը կախված է ընկերության կենտրոնական
խորհրդից: Ցանկալի էր, որ չուչացնով գրադարա-
նի բացումը, որովհետեւ մեծ պահանջ է ղգաց-
վում:

Ա. Մարտիանց

ՆԱՄԱԿ ՐՈՍՏՈՎԻՅՑ (Դօնի վրա)

Գեկտեմբերի 16-ին

Մեզ մօտ հիւր եկած հայոց դերասանական
խումբը տուեց իր վերջին հրաժեշտի ներկայա-
ցումը, դեկտեմբերի 14-ին, չաբաթ օր, Վիկտո-
րովի թատրոնում: Շատ ուրախալի էր, որ հայոց
կոյնիսան չաբաթ էր ներկայ լինել լսելու հայե-
րէն լեզուով արված ներկայացումը. կարծես թէ
Անդրկովկասի և Կովկասի գաղթական հայերը
ցանկացել էին աւելի պարտաճանաչ դանդա-
կայ դէպքում, քան Նոր-Նախիջևանի հայերը, ո-
րոնք այս անգամ միանգամայն փայլուն էին ի-
րանց բացակայութեամբ, և ամբողջ թատրոնում
դրանց թիւը հազիւ թէ տասն հասնէր, չը նայե-
լով որ այստեղ աշխուժ են բուսականաշափ մեծ
բաղձություններ: Դիմադրելին նա է, որ իրանց արդա-
բացնելու համար առաջ են բերում հազար ու մէկ
տեսակ անհիմն խոսքեր, որոնք ոչ մի կրիտի-
կայի դիմանալ չեն կարող: Մեզ չառ հետեւ կը
տանի, եթէ մենք այստեղ սկսենք պարապել դրանց
խաբակտերիստիկայով, միայն այդքանը կասենք,
որ դրանք օրգանապէս միանգամայն քարացել են:

Այստեղի հայ երիտասարդությունը ցոյց տը-
ւեց իր համակրանքը հայ թատրոնին և հայ բե-
մին ծառայող ուժերին: Տիկին Աւետեանին յայտ-
նեցին իրանց համակրանքը մի կենդանի ծաղ-
կեայ վնջով, և մի դափնեայ պսակով՝ ամբողջ
խմբին: Խաղացին «Ոճրագործի ընտանիքից» երկ-
րորդ արարումը, Պարոնեանի «Բաղդասար աղ-
բարը» և «Սիրահարը սեղանի տակ» Վոլոդիլը:
Պ. Վրոյլը՝ Բաղդասար աղբարի դերում՝ գրունց
ամբողջ հասարակութեան ուշադրությունը իր
խելացի խաղով, բաւական աղոյ էր և պ. Ստե-
փանեանը: Խաչ պ. Արեւեան «Ոճրագործի ըն-
տանիքի» մէջ՝ Կորագործի դերում հիացրեց հասա-
րակությունը:

Մեղաւում մի չաբ ներկայացումներ տալուց
յետոյ հայ դերասանական խումբը մեկնեց դէպի
Արմաւիր, այնտեղից էլ, մի քանի ներկայացում-
ներից յետոյ խումբը կտղտրովի Բագու:

Հ. Վարդանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՈՒՄԻՆԵՆ

Արդահան, նոյեմբերի 23-ին

Արդահանի հայ հասարակությունը մեծ զգուհե-
զգաց կարգալով «Արձագանք» լրագրի 98 և 118
համարներում «Քարոզ» և «Ճշմարիտ հայելի» վեր-
նագրով զրպարտիչ յօդուածները, որոնց հեղի-
նակ ատելի «Մոծակը» և չարանպատակ «Մոսա-
կանը» ան ձեռն կան մասնի մօտ են հաշիւ-
ն երեց զրգված՝ ձիւն են թափում ստուեր գը-
ցել Կարսի առաջնորդ Նիլիէ վարդապետ Մու-
րադեանի անձնաւորութեան վրա: «Մոծակը» և
«Մոսականը» իրանց գիւղական սրտի արտադրու-
թիւններով առիթ տուին մեզ հրապարակով հա-
ւատարմանը մեր տաճած յարգանքը դէպի մեր
յօղորդը, որի գովելի գործերին մեզից շատերը
ակնանտան վկայ են: Նրա տուկուն ջանքերի ար-
գասքն է, որ այսօր Կարսի ամենալաւ մասում
զգված է մի մեծ ուսումնարանի հիւրը, իսկ նը-
րա կողքին արդէն կանգնած և վարձու են տրված
գեղեցիկ կրպակները, որոնք արդիւնքով նա բաց
արեց և ապահովացրեց զարդը, ազատելով լիոդ-
ցից հարկւրաւոր թշուառ երեխաներ, որոնց թը-
ւում, եթէ «Մոծակի» և «Մոսականի» երեխա-
ները չը կան, կան և կը լինեն նրանց մերձա-
ւորներն երեխաները: Թիւրքերի կոտորածից ա-
զատվելով՝ Կարս հասալ խեղճ գաղթականները
աղօթում են նրա կենքի երկարություն համար,
փոխարէն այն օգնություններ, որ նրա միջոցով
հասնում են իրանց: Կարսի հոգևոր կառավա-
րութիւնը հայ Մուրադեանի շնորհիւ արդիւնա-
ւոր ուղղություն ստացաւ և գործերը կատար-
վում են արագ: Հայը՝ Մուրադեանի լուսաւոր
միտքը, պերճախօս լեզուն, անհասանելի, եռան-
դոտ և գործունեայ բնատրութիւնը, նրան մեր
բոլորիս սիրելին դարձրին, և մենք սպասում ենք
իր շնորհ բերելուն Արդահան, որ լսենք անձամբ
նրա աղաւթ խօսքերը, և առաջ տանենք մեր
գործերը նրա ճարտար դեկավարութեամբ, թե-
թեի տուած նրա հետ: Թիւրք հաշան շնորհ ար-
ծաթափայլ լուսնի վրա, լուսինը կը չարունակի
իր ուղիղ ճանապարհը, առանց նսեմանալու և
չեղելու:

42 ստորագրություն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից:

Մեզ հաղորդում են, որ Գանձակ քաղաքում,
նահանգապետ իշխան Նախիջևանի հաւանու-
թեամբ, կազմված է մի հոգաբարձութիւն,
որը խնամք է տանում այդ քաղաքում ապա-
տանած հայ գաղթականներին մասին:

Մեզ հաղորդում են, որ Մար իբաս Կատի-
նայի նոր գտնված գրքի մասին հայագէտ Կա-
րիեր պատրաստել է մի յօդուած, որը պէտք է
տպագրվի «Հանդէս Ամսօրեայ» ամսագրի յուն-
վարի համարում:

«Մինչև չը գան վերջինները, չեն յիշի առա-
ջինները»: Այդ խօսքը շատ յարմար է գալիս
«Московскія Вѣдомости» լրագրի նոր խմբա-
գիր Գրիգորովին, որ ստանձնելով իր նոր
պաշտօնը, մի անհասկանալի աղմուկ է բարձ-
րացրել ուսաց ազատամիտ օրգանների, գլխա-
ւորապէս «Вѣстникъ Европы» ամսագրի և
«Русскія Вѣдомости» լրագրի հասցէին, և այդ էլ
այնպիսի ծայրամասեցութեամբ, որ կամայակա-
մայ պէտք է արտասալ Պետրովսկուն... Մօսկ-
վայի յետադէմ լրագրի նոր խմբագիրը՝ ստանձ-
նելով «Հայրենիքի» պաշտպանի դերը, և դիմե-
լով ուսա ազատամիտներին՝ բացակայում է,
«Ասացէք, վերջապէս, դուք Թագաւորի հաւատա-
րիմ հպատակներ էք թէ ոչ, և այլն ըստ կար-
գին: Միթէ ճշմարիտ, պ. Գրիգորովին, և այդ էլ
անհասկանալի և ոտակաւորութեան, գրողի և ու-
տիկանի մէջ: Խոստովանում ենք, այդ ատիճանի
անվայելուչ քայլերը սաղ չեն գալիս նոյն իսկ
Կատիկի հետեւողներին:

Մեր բաժանորդներից մի քանիսը բաժանոր-
դագին ուղարկում են մեզ զանազան լրագրա-
կան գործակալությունների և գրաւաճառանոց-
ների միջոցով: Պարտք ենք համարում յայտնել,
որ մենք այդ գործակալություններից և գրաւա-
ճառանոցներից ոչ մէկի հետ ոչինչ յարաբերու-
թիւն չունենք և ոչինչ պատասխանատւութիւն
չանն չենք առնում այն բաժանորդագրութիւն-
ների մասին, որոնք ուղարկի մեր խմբագրու-
թեան չեն ուղարկվում: Առհասարակ, ոչինչ
թիւրիմացութիւնների պատճառ չը տալու հա-
մար, խնդրում ենք մեր բաժանորդներին իրանց
վճարը ուղարկել ուղղակի «Մշակի» խմբագրու-
թեան:

Բագուից, պ. Հայրապետ Քոչարեանց «Մշա-
կի» 1897 թ. մի օրինակը թողել է մեր տրա-
մագրութեան: Այդ նուէրը մենք կուղարկենք
վրացական Սախիբեթի գիւղի հայ համայնքին:

Եւպատորիայից, պ. Մինաս Աֆէրեանի նու-
րեց «Մշակի» 1897 թ. մի օրինակը Եւպատո-
րիայի հայոց գաղութին:

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 26-ին, հայոց
դերասանները պէտք է խաղան մի նոր պիէսա,
այն է Բակալիի «Порывъ» դրաման: Այդ
ներկայացումը մեր նոր դերասան պ. Օսանեանի
բեմնաֆիտին է: Այդ օրը կրկին բեմ պէտք է
դուրս գայ օր. Խիթարեան:

Երեւանի մեզ գրում են, «Ամբողջ մի շա-
բաթ է անընդհատ ձիւն է տեղում», ամբողջ քա-
ղաքը իր չորականերով թաղված է 3/4 արշինա-
չափ հաստութիւն ունեցող ձիւնի տակ: Կառ-
քեր բոլորովին չեն բանում, այլ սահալներն են,
որ սլանում են ալ ու ձախ:

Վ.Ա.Ի.Կ.Ա.Ի.Ա.Ա.Ա. մեզ գրում են, «Գեկտեմ-
բերի 22-ին, վերջապէս նորից ընդհանուր ժո-
ղով կայացաւ նոր երեցիկոյն ընտրելու ժողո-
վին ներկայ եղան միմիայն 51 անձինք: Երեց-
իկոն ընտրվեց երկրորդ կարգի վաճառական
Ներսէս Տէր-Յարութիւնեանց, որը յայտնի է
Իբրեւ բարեգործ ու եռանդուն անձն: Որքան
ուրախալի է այդ դէպքը, աւելի ևս ուրախալի
է այն, որ ժողովում անապատելի կերպով վըճո-
վեցին նաև այստեղի եկեղեցու համար մեծ նը-
շանակություն ունեցող երկու հարցեր: Նախ
վճովեց վերցնել պետական բանկից եկեղեցա-
պատկան 5000 ռուբլին և աւելացնելով այդ

գումարին մասնաւոր անձանց մօտ գտնվող 1000
ռուբլին, քիչ է եկեղեցուն կից շինութիւնները,
որոնք այժմ ծախվում են: Երկրորդ՝ վարդիկա-
կազի եկեղեցին քաղաքի նշանաւոր տեղերից
մէկում ունի աւերակ շինութիւններ, որոնք ըն-
կած են առանց մի օգուտ տալու: Այդ աւե-
րակները պատկանում են նաև Էջմիածնի վան-
քին և Գուշէթի եկեղեցուն. ժողովը միաձայն
վճեց աւերակների տեղ կառուցանել նոր խա-
նութիւններ, եթէ Էջմիածինը և Գուշէթի հայոց ե-
կեղեցին համաձայնվեն և վճարեն շինութեան
ծախսի իրանց հասանելի մասը:

ՇՈՒՂԱՎԷՐԻ գրադարանի հարցի առիթով մի
պարտն, Ա. Ղազարեանց խնդրում է մեզ տպա-
գրել հետեւեալը. «Մշակի» № 149-ի մէջ կարդա-
լով Շուշանից գրած նամակը, չապաւում եմ
յայտնել, որ մեր ձեռքով ժողոված գրքերի մեծ
մասը այժմ գտնվում է պ. Ա. Չօբանեանի մօտ,
որին յանձնված են այդ գրքերը դեռ 1894 թը-
ւին, երբ պարտքը աղայոց դպրոցի աւագ ուսու-
ցիչ էր. իսկ միւս մասը մեզ մօտ է: Այսպիսով
պատրաստ է Շուշանի նորակազմ գրադարան
ընթերցարանի» հիմքը, մնում է որ մի քանի
ձեռնառ անձիք գործի գլուխ անցնեն և աջո-
ղեցնեն նրա բացումը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վերջին ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեկտեմբերի 5/17-ից Լօղոնից մեր թղթա-
կիցը գրում է. «Հայոց խնդրին համար արտա-
կարգ կերպով ըսելու կարևոր բան մը չը կայ,
հաւանական է, որ դեռ մինչև ամիս մը Ան-
դրկովկասի մէջ խորհրդարանը հանդարտութիւն տի-
րէ. խորհրդարանը պիտի բացուի յունուար
19-ին, և ան ատենն է, որ նախարարութեան
ընելիք յայտարարութիւններուն համեմատ նոր
ընթացք մը պիտի առնէ հայկական հարցին հա-
մար անգլիական զգացումներուն արտայայտու-
թիւնը: Անգլիական ազգը միաձայնութեամբ ա-
մենամեծ իշխանութիւն տուաւ լորտ Սոլդաթի
հայկական հարցին լուծումին համար. հիմա թող
արուած է, որ արտաքին գործերու նախարարը
իր բանակցութիւնները շարունակէ և իր խելքին
համեմատ գործէ, երևան եկած արդիւնքին հա-
մեմատ է, որ անգլիական ժողովուրդն ալ նորէն
կամ երևան պիտի գայ, կամ գոհ պիտի մնայ:
Այսպէս կը կարծեն ամենէն աւելի տաք հայա-
սէր անձնաւորութիւնները և թերթերը: Հիմա
հիմա կացութիւնը յուսադրական է, նոյն իսկ
պաշտօնական աղբիւրներէ բղխած տեղեկու-
թիւններու համեմատ:

Ներմաս հարցը

Կատարեալ հեգնություններ են ներմաս հարցը:
Ներում են, բայց ում. անմեղ հայերին, որոնք
բաւական չէ, որ անարդար տեղից բանկեցին,
բանտարկվեցին և անուր տանջանքներ են թարկ-
վեցին, այլ և պէտք է այժմ երկնային ողորմու-
թիւն համարեն, որ ազատվեցին բանտերից և
մինչև իսկ սուլթանին ամեն տեսակ հաւատար-
մութեան և հնազանդութեան երդումներ տան:
«Ինքօրմներ» պահանջող պետութիւնները պէտք
է պատասխանատւութեան ենթարկեն բնաւոր
թիւրք կառավարութիւնը 12 հազար հայեր թիւր-
քական ստակալի բանտերի մէջ տանջելու հա-
մար, և ոչ թէ թող տան, որ Բ. Գուռը մի շնորհ
համարէ այն, որ անմեղները պէտք է բանտերի
մէջ չը նստեն, այլ իրաւունք ունենան ազատ
չունչ քաշելու: Եւ Օրմանեան պատրիարքը, հա-
յոց հոգեւորականութիւնը, ինչպէս ձիւղ նկա-
տում է «Daily News» լրագրից, այն ատիճան
ստորաքարտութեան են հասել, որ ուղերձներ են
կազմում և ստորագրում այդ ամբողջ ու-
ղերձանքին:

Կ. Պոլսից հեռագրում են «Daily News» լրա-
գրին դեկտեմբերի 23-ից, որ վերջին երեք օ-
րում մօտ 400 թիւրքեր ձերբակալվեցին. նրանց
մասնակ են միւս բանտարկվածները, որոնք չը
դիմանալով տանջանքներին, յայտնել են իրանց
ընկերակիցների անունները:

Յրանիական լրագրիւններն Կ. Պոլսից գրում
են հետեւեալ դեկտեմբերի 18-ից. «Ռուսաց դե-
պան պ. Նելիզով թիւրքաց մայրաքաղաքը մտա-
անցեալ օր: Թէ ուսաց և թէ եւրոպական լրա

գիրները այն համոզմունքն էին յայտնում, որ Նէլիզովի վերադարձից յետոյ աւելի եռանդուն կերպով կը գործեն դեպքանները, և սուլթանը ալ ևս չէ կարող անտես առնել Նէրոպային իր սուած խոտածները: Այդ յօդուածներէն ևս զիստ Էր, որ իշխան Լորանովի քաղաքականութիւնը պարտութիւն է կրել և յաղթող է հանդիսացել գործելու քաղաքականութիւնը: Սակայն դա ճիշդ չէ: Պ. Նէլիզով վերադարձել է թէփօրմներէ մի ծրագրով, որը—անցողակի ասած—սինչ համաձայն չունի Շիշկին-Հանօթի ծրագրին: Պ. Նէլիզով պէտք է խորհուրդ տայ՝ ընդունել և գործադրել թէփօրմները, առանց որ և է ստիպողական միջոցների դիմելու: Պէտք է ասած, որ ռուսաց դեսպանատան մէջ ևս համադրված են, որ թէփօրմների այդ ծրագիրն էլ իր նախորդների վիճակը կունենայ:

«Daily Telegraph» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է. «Էւրոպայի, որ Նէլիզով սուլթանին համազօրու հաղաթակով յայտնեց, թէ միակ միջոցը իր գոյնը պահպանելու—թէփօրմներ մտցնելն է. սակայն սուլթանը պատասխանել է, թէ ինքը նախաձեռնար է համարում լինել վերջին խաղի քան դառնալ և երկուսը իւր իւր Նէրոպայի մամուլի մէջ նորից մկտում է տիրապետել պէսմիտական հայեացքը հայոց հարցի վիճակի վերաբերմամբ: Լեւրագիրները առաջ են բերում իրը Նէլիզովի ասած հետեւալ խօսքերը. «Մենք դեսպաններս առ այժմ միայն համաձայնակ ենք համաձայնութիւն կայացնելու համար» (Nous sommes d'accord pour nous mettre d'accord): Այդ խօսքերը յայտն են տալիս, որ իրքը ոչ մի գործ չը կայ, բացի դատարկ խօսքերից:

Անգլիական լրագիրների մէջ ծննդեան տօնի առիթով տպագրվում են բազմաթիւ յօդուածներ Հայաստանի թշուառ վիճակի մասին: Ոչ միայն Լոնդոնի, այլ և դաւառական թերթեր նուիրում են թղթակցութիւններ և առաջնորդութիւն թէ չառաջացած փողովորդին: Մէկը առաջարկում է նպատակներ ուղարկել գաղանթութիւնների գոհերին, միւսը անհրաժեշտ է համարում աղօթել հեռաւոր քրիստոնեայ եղբայրակիցների համար: Այժմ Անգլիայում շատերը մեղադրում են իրանց կառավարութեան, որ նա անցեալ տարի չը միջամտեց թիւրքաց գործերին, որով կարելի կը լինէր աղանդ վերադառնալին այն սարսափելի կորուստից, որ այլ ևս ոչ մի կերպ չէ կարելի վերականգնել:

Զօրջ Բօրեթոս անունով մի անգլիացի տղարու, «Daily News» լրագրի միջոցով հարձնում է իր հայրենակիցների ուշադրութիւնը փախտական մի հայի վրա, որ այժմ գտնվում է Անգլիայի Լիքո քաղաքում: Այդ հայը լաւ գիտէ Քրանտերէն, թիւրքերէն, նոր յունարէն և բաւականաչափ հասկանում է անգլիերէն: Նրա պատմելով Կ. Պոլսի կատարածները տեղի ունեցան սուլթանի անհաւան կարգադրութեամբ և գիտութեամբ: Բօրեթոս չէ յայտնում հայի աղքատները և առաջարկում է նրան, իբրեւ օգտակար անձի, համապատասխան մի պարագայուց տալ ինչ կապէր անգլիացիներ, եթէ տեսնէր այդ գաղթականի հաղաբարձութիւնը: Ի՞նչ անգլիացիները հաղաբարձութիւնը հեռագրում է, թէ չորհրդի դեսպանների առաջարկութեան թիւրքաց կառավարութիւնը համաձայնեց թարգմանների ներկայ լինելուն: Թիւրքաց կառավարութիւնը ներման ցուցակի մէջ մտցրել էր և հայր Սալվատորին սպանող Մաղբար բէյի անունը: Բայց դեսպանները պահանջեցին, որ այդ անունը հանվի, որովհետեւ Մաղբար բէյի յանցանքը որիչ բնատուրութիւն ունի և նրա գոյնը թիւրքահայապաշտ չէր, այլ օտարազգի:

«Մշակի» անցեալ համարում մենք հաղորդեցինք, որ հայը Սալվատորի գործի ընտելեան միջոցին թող չէր տրված Քրանտեական և իտալական թարգմաններին ներկայ լինելու դատին: Այժմ թէպէտ գործակալութիւնը հեռագրում է, թէ չորհրդի դեսպանների առաջարկութեան թիւրքաց կառավարութիւնը համաձայնեց թարգմանների ներկայ լինելուն: Թիւրքաց կառավարութիւնը ներման ցուցակի մէջ մտցրել էր և հայր Սալվատորին սպանող Մաղբար բէյի անունը: Բայց դեսպանները պահանջեցին, որ այդ անունը հանվի, որովհետեւ Մաղբար բէյի յանցանքը որիչ բնատուրութիւն ունի և նրա գոյնը թիւրքահայապաշտ չէր, այլ օտարազգի:

ՆԱՍԱԿ ՖԻԼԱՆԹԻՆՅՈՒՆ

Պարիզ, դեկտեմբերի 4/16-ին

Հիմակ որ, տխուր համբաւով մը, հայ անունը արձագանք գտած է Նէրոպայի ամենէն խուլ անկիւններուն մէջ անդամ, իրենց ցեղին ամենէն

զնախատի ծառայութիւններէն մին մատուցանող այն հայերն են, որոնք Նէրոպայի առջև ցայց կուտան թէ հայերը ոգորմելի ու ոչխարաւին Վարենիներ: չեն լոկ, որոնց գործն է ջարդել միայն, հայա շատախոյններ հին քաղաքակրթութեան մը, որոնք ամենէն բարձր ու ազնիւ ընդունակութիւնները ունեն և որոնք, աւելի լաւ ու աւելի նպատակաւոր պայմաններու մէջ, պիտի կրնան լիովին ցայց տալ ոչ թէ միայն իրենց անհամեմատ գերազանցութիւնը գիրենք ջարդողներուն վրա, հայա նաև այն պատուար տեղը, զոր կրնան գրաւել Նէրոպական քաղաքակրթութեան ալ մէջ:

Այս նկատմամբ, վաճառք Սըվաճեան գերաւեցողական ու ազգային տեսակետով մեծ գործ տեսաւ այս օրերս Զուիցերիոյ մէջ, ուր Բարիդէն հրախրուած էր Նուազահանդէներ տալու և ուր, ինչպէս գիտէք, հայերու նկատմամբ համակրանքը հասած է այնպիսի աստիճանի մը, որ ուրիշ ոչ մէկ տեղ կարելի է տեսնել: Պ. Սըվաճեանի անունը իմացած էր հարկաւ ինքը Թուրքիոյ հայերու գրականութեան մէջ առաջին տեղերէն մին կը բռնէ, և իր նորալեզուներ, որոնք հրատարակուած են «Հայրենիք» մէջ, անթիւն, չլուր ևս նկարուած ունի մը կը միջոցներ խորունկ ըմբռնում մը կհանգրի իմաստասիրութեան ու բանաստեղծութեան: Իբրեւ գաղանթահար սակայն, Վիէնայի երաժշտանոցին այդ նախկին աշակերտը, մանաւանդ երկու տարի ատաջ Անգլիա տուած Նուազահանդէներովը ամենուն ուշադրութիւնը իր վրա դարձուցած էր իբրեւ արտասովոր արուեստագէտ մը: Բոլոր զինքը մտիկ ընդունելը, մանաւանդ վերջերս, կը դարձանային այն սքանչելի խառնուրդին վրա, զոր իր արեւելքի հոգիին մէջ կրած է արեւմտեան երաժշտութիւնը: Երան, Եւրոպան և Լիւթ—իր սիրական հեղինակները—Նուազած ատենն իսկ՝ հայ մըն է ինքը, եթէ կարելի է այդպէս ըսել, խորապէս զգացող, ուժեղ, ու միանգամայն այն սաստիկ ու թախաբանող մեղադրութեամբ, զոր մեր մէջ չիմած ու սնուցած են դարերու տառապանքներ:

Բայց իր երաժշտական տաղանդին վրա գաղափար մը տալու համար՝ լաւագոյն կը համարիմ խօսքը թողուլ Զուիցերիոյ լրագիրներու քննիկադիրներուն:

Երիտասարդ արուեստագէտը իր առաջին Նուազահանդէսը տուաւ Լօզան «Gazette de Lausanne» կը գրէ այս մասին. «Վաճառք Սըվաճեան լեւի լեցուն սրտի մը առջև տուաւ իր Նուազահանդէսը: Ամենքը գործացուց նախ իր Նուազածութեան միւլգիտութեամբ, իր իսկապիսի նկարագրով, բանով մը որ մեզի համար անսովոր էր: Զետոյ մեզ գիտէք ու իրեն պահեց իր ճարտարութեամբ ու գործութեամբ, Գրիզը, Չայկովսկին, Վալենը ու Լիւթը հասկնալու և արտայայտելու բոլորովին իրեն յատուկ եղանակով: Իր Նուազած «Հայկական եղանակները» նորանշան ու տխուր նկարագիր մը ունին: Յաւազին աննկարագիրութեամբ լեցուն հայ հազարերորդիւն կարծես մէկ արձագանքը արթնցուց այն ահաւել չարաշահութիւններուն, որոնց զոհ է այդ վաղեմի ժողովուրդը: Մարդ կը զգայ թէ կը դառնի արուեստագէտի մը առջև, որ կատարելապէս տէրն է իր գործիքին և երաժշտական կրակուտ ու խորունկ զգացում մը ունի: Մտտոնի մէջ տուած Նուազահանդէսին համար, տեղական թերթը կը գրէ. «Հատ բան կը սպասէինք երիտասարդ արուեստագէտին, որ Լօզանի մէջ ծախսարուած էր՝ մեր պղծիկ քաղաքը այցելելէն ետք որ առաջ, սակայն այսպիսի չէինք սպասել: Կ. Վաճառք Սըվաճեան գրեթէ միշտ թովեց դիւթեց իր ունկնդիրները: Ասի կարելի էր հաստատել ոչ այնչափ ծախսարուութեանց ուժգնութեան, որչափ կրճատական լուրժեան խորութեան, որով ունկնդիրները մտիկ կընէին անուշադիւսութեամբ կամ եռանդով դարձած նոթի մը վերջին թրթուրը, ձայնի մը յարմարութեամբ: Նոյն իսկ վաղեմեաններ ներ կային, ուր Լօզանի մեր մտիկ կընէին, որովհետեւ արուեստագէտը երկու նոթի կամ երաժշտական երկու ֆրագի մէջտեղ խորապէս ազդեցիկ դադարներ կուտար: Պ. Սըվաճեան անշուշտ վերտուող մըն է, դիրաշարժութեան մէջ այն հաւատարմութիւնը, ուժին մէջ այն հանգստութիւնը ունի, որոնք կատարեալ ճարտարութիւն մը կը կազմեն մատնելու, բայց բարեբաղդաբար վերադառնալու աւելի լաւ բան

մըն է ան. իր հոգիով կը նուազէ, և իր հոգին կանցնի, զոգորմուն, իր գործիքին մէջ: Ինչ կըլլայ հետեւեալը: Դաշնամուրը (իսկ զգաճամուրը, որուն վրա յաճախ այնքան արհամարհանքով կը նայեն) կուտայ այնպիսի թրթուրներ, որոնք անմասն չեն իրեն, որոնց կարող չէր կարծուել:»

Նէշաուէլի գերմաներէն թերթ մը կը գրէ. «Բնաւ այսպիսի բան մը եկած չէր: Սըվաճեան իր արամադրութեանը տակ ունի բոլորովին ապրեցողիչ ճարտարութիւն մը մատնելու և իր գործիքին միջև ամենաներքին ալքերը կը ճանչնայ: Երբեմն վիթխարի գործութեամբ կրակի կայծեր կը ցայտեցնէ դաշնակէն և լսել կուտայ մեզի որոտման պայթումը: Զօր մանչիւնը ծովու խորին կոհնիւններուն, անարձակութիւնը կատարի ճակատամարտի մը, և կրնանք այսպէս ըսել՝ «Սարսափը աշխարհաւոր քանդման մը, ինչպէս կը ներկայացնէ իր Ֆանտազիան և Ռաբսոտին (անձնական հեղինակութիւններ): Մեղ համար որ հայա արին չունինք, դժուարաւ ըմբռնելի են ասոնք: Զետոյ մեծ արուեստագէտ մետաղեայ լարերէն ձայնի թրթուցուց չորհալի փափկութեան և անհաւատելի նրբութեան (Չայկովսկիի «Բարեպաշտ» և ինքնագիր «Որորքին» մէջ), այնպէս որ մինչև իսկ մարդ ինքն իրեն կը հարցնէր թէ կարելի էր արդեօր այդպիսի բան մը արտադրել գործիքին վրա... Լիւթ գերազանց թարգման մը գտաւ իր մտքին՝ երբ Նուազած անոր «Ս. Ֆրանսուան», այս կտորը Նուազահանդէսին գոհարը եղաւ: Արեւելի դաշնակահարին կը ներկայացնէր մեր հիւանդան խոտաւանութիւնը:»

Ուրիշ լրագիր մը. «Իր դարձուածը վերջին ծայր ինքնատիպ է: Թերեւս շատ չի յարգեր ուսուցչութեամբ դասական դարձած գործերը և քիչ շատ սովորական ու ընդհանրական դարձած interpretation-ները: Միայն թէ նորապէս կտորներու մէջ, ինչպէս Եւրոպայի և Եւրոպայի, հրաշալիքներ կը գործէ: Սըվաճեան բոլորովին վերաւոր է մասնաբեր ճարտարութեան մասին և այս մասին Բուրիշայտայի գաղափարն է, սակայն ասանց դիմելու իր անհատական եղանակին, որ յառաջ կուգայ մանաւանդ իր արեւելեան ծագում ունենալէն:»

Կը վերջացնէ ժընէվի «La Suisse liberale» թերթէն հատուածով մը Պէտք է ըսել որ Ժընէվի Նուազահանդէսը կաղանկեղած էր նոյն ինքն յարաշարժութեան անօրէնը: «Երաժշտական արուեստի ընդհանրաւ մը կը զրէ մեզի: Պ. Սըվաճեան մեղմութեան մէջ հիմնալի Նուազածութիւն մը ունի, մասնաբեր ծայրը կարծես թափէ ըլլայ, և սքանչելապէս երգել կուտայ իր դաշնամուրին: Իր ֆօրտէն և ինքնագրութեանը փափուկ ու նուրբ են... Իր «Հայկական եղանակները» շահեկան են իբրեւ երաժշտական նորութիւն. մարդ շատ քիչ անգամ առիթ կունենայ լսելու այսպիսի երաժշտութիւն: Այս արուեստագէտը ապագայութիւն կը թողու, հոգիով մարմնով ինքնիքը տալով իր Նուազածին:»

Պ. Սըվաճեան մի քանի օրէ ի վեր դարձած է Զուիցերիային, ուր շատ կարելի է որ նորէն դառնայ՝ այս անգամ Նուազահանդէսներ տալու համար Բէրն, Զուրիխ, Բալ և Լուցերն: Պէտք է քայլէ հրախրված է արդէն, ու Պարիզի մէջ իր մեծ Նուազահանդէսը պիտի տայ փետրվար 8-ին, ու յետոյ անցնի Լոնդոն: Ու ես վրտած եմ որ շատ չանցած իր աղջկութեան լուրեր պիտի ունենաք բոլոր այս կենդանիներէն:

Լ. Բաշալեան

ՊԱՐԻԶԻ ԲԱՆԿԵՏԸ

Նէրոպական լրագիրները հաղորդում են, թէ այժմ երկուց են կրում, մի գուցէ երիտասարդ թիւրքերի կուսակցութիւնը մեծ հոգսեր պատճառէ Նէրոպային: Վերջին օրերս այդ կուսակցութիւնը չարապահաց յուզված է: Յայտնվել է, որ այդ կուսակցութիւնը վաղեմի է Արեւմտեքի մի քանի քաղաքական շրջանների համակրութիւնը և աջակցութիւնը: Այդ համակրութիւնը արտայայտվեց և Պարիզում, դեկտեմբերի 12-ին կայացած բանկետում, որ երիտասարդ թիւրքերը սարքել էին թիւրքաց սահմանադրութեան հրատարակութեան տարեդարձը տօնելու համար: Բացի կուսակցութեան անդամներից, բանկետին

ներկայ էին Փրանսիացի և օտար շատ ժուրնալիստներ: Կուսակցութեան ճառարտները, մանաւանդ Մուրադ բէյը, եռանդուն կերպով բողոքեցին Թիւրքիայում այժմ տիրող բռնակալութեան դէմ, փառաբանելով Միդատ փաշայի յիշատակը և շեշտեցին, թէ միակ փրկութեան խարխիւր Թիւրքիայի համար՝ սահմանադրական կառավարութիւն մտցնելն է: Այդ սխեման պահարակել Կ. Պոլսի Նէրոպական զիւլումատիայի անպատու գործունէութիւնը և սուլթանի համար անհրաժեշտ որութիւնը խիստ յարձակումների ենթարկվեց: Ֆրանսիացիների կողմից ճառեր արտասանեցին—«Figaro» լրագրի ներկայացուցիչ Մորիս Լէօդէ, որը բաժակ առաջարկեց թիւրքաց աղատութեան համար. պրօֆէսոր Բէրսո, որ առաջարկեց դատարկել բաժակները սուլթանի տապալման համար, և ֆրանսիական պողտովիտների զուլու Պիէր Լաֆիտ, որը գովաբանեց իսլամը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 25 դեկտեմբեր: Առաջին և երրորդ զորքամիւնների հինգ բաժնիկներն այս օրերս վերադառնում են Սթամբուլ և Զիւլախիս: Կրեւէ կղզում մնում են 5-դ զորքամիւնի 12 բաժնիկները:

Կ. ՊՈԼԻՍ, 23 դեկտեմբեր: Այս լուրը, թէ Բ. Դուրը հաստատեց Աթիմիտին բուսնական միաբայութիւն, հերքվում է:

Սուլթանը չեղանչեց չորհանց Մէնէլիկին: Երանչաներ են չորհրդած նայնպէս նեղուսի քարտուղար Ատո-Եօսիֆին և ուսանալատակ Լիւտի-եմիլին:

ՊԵՏՏՐՈՒԹՅՈՒՆ, 24 դեկտեմբեր: Հրատարակված է Բարձրագոյն հրովարակի արված պետական խորհրդի անգամ դեկտեմբերի 24-ին Շուվալովի անունով: Հրովարակի վրա Ներին կայսերական Մեծութեան սեփական ձեռքով գրված է «Անկեղծ ձեզ շնորհակալ եմ ՆԱՊՈԼԵՈՆ»:

Բարձրագոյն ուղարկելու իր խնդրքի համաձայն, Սինատի բրէկային վճարելու գնաբարձութեան օգէր-պրօքլուրի պաշտօնից արձակվող սենատոր Կոնիին հրամայված է ներկայ լինել Սինատի նոյն գնաբարձութեան տուած: Ներքին գործերի մինիստրութեան ղեկավարի բաժնի կառավարչի օգնական Գիսպիտիսին հրամայված է լինել նոյն մինիստրութեան ղաղկականական վարչութեան ղեկավար:

ՀԵԼԵՆՆԱՅՈՐՈՒՆ, 24 դեկտեմբեր: Սօֆիա մարզաւար չորհուրդը, որը Աթոք գնում էր Ստոկհոլմ, ծանծաղուտի մէջ խրվեց Զադէբաճ մասեան փարոսի մօտ: Երանչաւը չորս լցվեց: Ստոկհոլմից օգնութեան գնաց «Պոսէյդոն» չորհուրդը:

ԱՅԻՆՍԿ, 24 դեկտեմբեր: Գեկտեմբերի 22-ին խորապիկեց կաղկանկական գնացքը «Կիւլա» և «Երվկա» կայարանների մէջ: Նոյն Երանչաւը և մի քանի վազաններ ընկան բարձր հողաթումբից: Յայտնի չէ, թէ արդեօր զոհեր կան:

ՊԱՐԻԶ, 24 դեկտեմբեր: Սինատի ընտրութիւնների հետաքննարկը պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, ընտրած են 69 հանրապետականներ, 13 արմատականներ, 3 սոցիալիստներ և 12 պահպանողականներ: Կոնստանտինոն տեղ պարտութիւն կրեց:

ԽՐԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՏՐՈՒՆԵՐ

ԲԱԹՈՒՄ, Ա. Զեքեանց, Արդուինի գրադարանի 1896 թ. բաժանարարային ստացված է լիովին. կարգադրեցէ ինչ անել ձեր ուղարկած 5 բուքլետ:

ՄԻԼԵՄԵՆՏ, (Ամերիկա) Յ. Պ. Չարմաքեանց: Զեր ուղարկած երկու հասցեով «Մշակ» կուղարկվի 1897 թվին, համաձայն ձեր դեկտեմբերի 7/19 ի նամակի: Ի պատասխան ձեր երկրորդ նամակի կրկնում ենք, որ ձեր առաջին նամակը ստացանք առանց դրամի, և այդ մասին անմիջապէս յայտնեցինք ձեզ («Մշակ» № 82): Պատահին ոչինչ չը յայտնեցինք, եթեպէտեւ որ սխալը նամակ ուղարկողի կողմից է, մանաւանդ որ ծրարը այսպիսի պատճառ յանձնեց խմբագրութեանը չը բացված: Բարեհաճեցէ կարգադրել ինչ հարկաւոր է:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐՄՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Ուրբաթ, դեկտեմբերի 27-ին, երեկոյեան 9 ժամին, նշանակված է անդամների ընդհանուր ժողով՝ 1) մեռած անդամների վրա մնացած մի քանի անդամային պարտերը բաշխելու հարցի լուծման համար և 2) կանդիդատներին ընտնարկելու համար:

Типографія Канцел. Главн.нач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликъская ул. д. 233.